ՈՒՍՈՒՑԱՉՈՒՍ Է
ՎԵՀԱՓԱՌԸ

ՎԵՀԱՓԱՌԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ

1999 թ. հունիսի 18-ին վերջին անգամ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի շուրջը բոլորվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը: Իր երկրային կյանքի ամենավերջին հանգրվանին հասած պերճաբան ու քաղցրախոս Հայրապետը իր հոգևոր կրտսեր եղբայրներին ու զավակներին կանչել էր փոխանցելու հրաժեշտի հայրապետական պատգամը: Հավաքված միաբանների կողմից նախ Վեհափառին դիմեց Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափառ Տեր, շնորհակալ ենք և փառք ենք տալիս Աստծուն, որ Ձերդ Սրբությունը նաև անկողնուց մեզ է բաշխում իր Հայրական օրհնությունները: Այս երիտասարդ սերունդը Ձեր շնչով, Ձեր ոգով կրթված և սնված սերունդ է և հավատում ենք, որ պիտի հետևեն Ձեր քայլերին և նույն նախանձախնդրությամբ, նույն նվիրումով, նույն հավատքով, նույն անդադրում աշխատասիրությամբ իրենց ծառայությունը պիտի մատուցեն մեր Եկեղեցուն և Եկեղեցու միջոցով՝ մեր ազգին ու հայրենիքին: Ուրեմն, Վեհափառ Տեր, Ձեր թույլտվությամբ կուզեմ ընթերցել Ձերդ Սրբության խոսքը և պատգամը մեր միաբաններին:

Անողոք հիվանդությունը, որ նախ կապանք դրեց Նորին Սրբության շքեղ խոսքի ծայնային ելևէջումներին, թողնելով միայն գիրը, այնուհետև արագաքայլ առաջանալով շաբաթ շաբաթ՝ կրճատեց նաև թղթին հանձնվող տողերը, հոգեմտավոր վերջին ցոլացումները՝ հայրապետական վերջին կոնդակները, օրհնության գրերը, գնահատանքի խոսքերը և մտածումները:

Վեհափառը միշտ շեշտում էր, որ թեև ինքը Հայրենիքում չի ծնվել, սակայն Հայրենիքն է ծնվել իր մեջ և թե՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս դառնալով իր կյանքը միաշաղախեց Ս. Էջմիածնի կյանքին: Եվ հիմա Ս. Էջմիածնի հովանու ներքո հայրենի հողին միաշաղախվելուց առաջ դիմելով այդ հողի, ժողովրդի ու եկեղեցու հոգևոր սպասավորներին, հոգևոր-կրոնականի ու ազգային-եկեղեցականի զարմանալի մի ներդաշնակությամբ տասնամյակներ շարունակ հնչեցրած իր խոսքը նույն ներդաշնակությամբ խտացնելու էր հայրապետական վերջին պատգամում:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ
ԵՎ
ԳՐՎԱԾ ՎԵՐՋԻՆ ՏՈՂԵՐԸ

[illegible]

[illegible]

[illegible]

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄԻԱԲԱՆՆԵՐԻՆ

Սիրելի միաբաններ, Հոգեկան խորը Հուզումով կբաժնվիմ ձեզմէ, կմիանամ Աստծո՝ Հարուցյալ Տիրոջս: Փափագս է, որ դուք երկար ժամանակ մնաք Աստծո Հետ, քաջ ըլլաք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սիրէք եւ անոր սուրբ, կրոնական եւ ազգային ծառայումները շէն պահէք: Մնասնելիորէն տկար եմ. դուք մնաք զորավոր:

Աղոթարար սիրով

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18-06-1999
Ս. Էջմիածին

ԳԱՐԵԳԻՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

Ձեր ոգով և Ձեր երազներով՝ շեն, հաստատուն ու անսասան պիտի պահենք, Վեհափառ Տեր, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ձեզ հետ միասին: